ՅՈՒՆԻԲԱՆԿ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. գործունեության վերաբերյալ

Հարգելի բաժնետերեր և գործընկերներ,

Թույլ տվեք ներկայացնել «Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. գործունեության վերաբերյալ համառոտ հաշվետվությունը: Ինչպես գիտեք, Խորհրդի որոշմամբ, նախորդ տարվա նոյեմբեր ամսից ստանձնել եմ Յունիբանկի Վարչության նախագահի պաշտոնը և կցանկանայի Վարչության անունից երախտագիտություն հայտնել Վարդան Աթայանին երկարամյա համատեղ աշխատանքի համար:

2017թ. Յունիբանկի գործունեությունն նպատակաուղղված էր Բանկի ֆինանսական կայունության և ներդրումային գրավչության բարձրացմանը, ինչպես նաև ակտիվների որակի բարելավմանը, ինչի շնորհիվ 2018թ. առաջին եռամսյակում Բանկը գերակատարեց Բիզնես պլանը հիմնական ուղղություններով: 2017թ. գերակա խնդիրները ներառում էին նաև կազմակերպչական կառուցվածքի արդյունավետության բարձրացումը, բանկային ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործումը, համապատասխանության ապահովման գործառույթի զարգացումը, հաճախորդների սպասարկման որակի բարելավումը: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել քարտային բիզնեսի զարգացմանը՝ թողարկվող քարտերի քանակը հասցնելով ամսական 4000-ի:

<u>Համառոտ ֆինանսական ցուցանիշների մասին</u>

2017թ.՝ հաշվետու տարվա, արդյունքներով, համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների՝

- ✓ **ԱԿՏԻՎՆԵՐԸ** կազմել են 202.7 մլրդ դրամ, 2016թ. ցուցանիշի համեմատ աճը կազմել է 9.3%: Բանկը զբաղեցրել է 10-րդ տեղը բանկային համակարգում:
- ✓ **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** կազմել են 167.4 մլրդ դրամ, աճը՝ 11%-ով, 10-րդ տեղը համակարգում:
- ✓ **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ** կազմել է 35.4 մլրդ դրամ, նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է 1.5%-ով, 11-րդ տեղը համակարգում: 2017թ. վերջի դրությամբ կապիտալի համարժեքության ցուցանիշը կազմել է 17.04%, ինչը գերազանցում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն մակարդակը (12%):
- ✓ **ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ** հասել են 135.1 մլրդ դրամի, աճը՝ 14%-ով, 8-րդ տեղը համակարգում:
- ✓ **ԱՎԱՆԴՆԵՐԸ** կազմել են 128.4 մլրդ դրամ, նախորդ տարվա համեմատ պորտֆելը գրեթե չի փոխվել: Թողարկված պարտատոմսերի պորտֆելն ավելացել է 2.5 մլրդ դրամով: Ավանդների ծավալով Բանկը զբաղեցնում է 9-րդ տեղը համակարգում:
- ✓ **ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** կազմել են 10.5 մլրդ դրամ, գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 2.1 մլրդ դրամով, կամ 25%-ով: Զուտ տոկոսային մարժան կազմել է 5.41%՝ գերազանցելով 2016թ. ցուցանիշը 0.48 տոկոսային կետով: Վերջինս արդյունք է ռեսուրսային բազայի բազմազանեցման և ներգրաված միջոցների տոկոսադրույքների նվազման:
- ✓ **ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** կազմել են մոտ 3.0 մլրդ դրամ, աճը՝ 20%-ով: Զուտ ոչ տոկոսային եկամուտները, հաշվի առնելով վարչական ծախսերը, աճել են 2%-ով՝ հիմնականում կոմիսիոն եկամուտների ավելացման և վարչական ծախսերի զուսպ մարտավարության շնորհիվ:
  Հաշվետու տարում ծախսերի օպտիմալացմանը զուգընթաց Բանկին հաջողվել է բարձրացնել հիմնական գործառնությունների եկամտաբերության մակարդակը՝

հաճախորդային բազայի ընդլայման, նոր գործիքակազմի ներդրման և սակագնային քաղաքականության օպտիմալացման միջոցով:

- ✓ Գործառնական շահույթը մինչև պահուստավորումը տարեվերջի դրությամբ կազմել է 6.2 մլրդ դրամ, ինչը 55%-ով գերազանցում է 2016թ. ցուցանիշը:
- ✓ **ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԸ** կազմել է 67.6 մլն դրամ, նախորդ տարվա 443.2 մլն դրամ վնասի դիմաց:

Վարկային ներդրումներ

Բանկի ընդհանուր վարկային ներդրումներն առ 31.12.2017թ. կազմել են ընդհանուր ակտիվների 67%-ը: Դրամային վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 53%-ը: Վարկավորման միջին տոկոսադրույքը կազմել է տարեկան 13.5%:
Բարելավվել է իրավիճակը ժամկետանց պարտավորությունների մասով, չաշխատող վարկերի մակարդակը 18%-ից նվազել է մինչև 16%-ի, տարվա ընթացքում իրականացված հետևյալ միջոցառումների արդյունքում՝ բիզնես գործընթացների ավտոմատացում, սքորինգային համակարգերի բարելավում, վերակառուցում, հետբերման աշխատանքների ակտիվացում, ՓՄՁ վարկավորման կենտրոնի և Անդերրայթինգի ուժեղացում, վարկավորման շուկայի սեգմենտավորում:

Մանրածախ բիզնես

Յունիբանկն արձանագրել է ցուցանիշների զգալի աճ ֆիզիկական անձ հաճախորդներին մատուցվող ծառայությունների բոլոր սեգմենտներում: Մանրածախ վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 51%, կամ 71.4 մլրդ դրամ: 2017թ. Յունիբանկի կողմից տրամադրված մանրածախ վարկերի ծավալը 34%-ով գերազանցել է 2016թ. արդյունքը՝ գլխավորապես վաճառքների մոդելի փոփոխման և պորտֆելի կառավարիչների խմբի ձևավորման շնորհիվ: Ապրանքների և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման վարկավորումը հաշվետու տարում նույնպես հանդիսանում էր Բանկի գերակա ուղղությունը: Արդյունքում՝ Յունիբանկը 29% մասնաբաժնով պահպանել է առաջատար դիրքը ապառիկ վարկավորման շուկայում:

2017թ. Բանկը վերահաստատել է հիփոթեքային վարկավորման պետական ծրագրերում ակտիվ մասնակցի կարգավիճակը: Հաշվետու տարում Յունիբանկի կողմից տրամադրվել է 4.4 մլրդ դրամի թվով 169 հիփոթեքային վարկ, որից 203 մլն դրամի թվով 21 վարկ տրամադրվել է «Ազգային հիփոթեքային ընկերության» ծրագրի, իսկ 168 մլն դրամի թվով 17 վարկ՝ «Բնակարան երիտասարդներին» ծրագրի շրջանակներում:

Սպառողական վարկերի գծով օնլայն հայտերի քանակը տարվա ընթացքում կազմել է 11.734 հատ՝ 5.1 մլրդ դրամ ընդհանուր գումարով, որից հաստատվել է թվով 3.860 վարկ՝ 1.2 մլրդ դրամ ընդհանուր գումարով:

Յունիբանկի ակտիվ քարտերի քանակը տարեվերջին կազմել է 170.000 հատ: Շրջանառության ծավալը սպասարկման կետերում գերազանցել է 39.5 մլրդ դրամը, որից 32 մլրդ դրամը՝ բանկոմատներով:

2017թ. մանրածախ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը կազմել է 16.8%, նվազելով 1.4 տոկոսային կետով, տոկոսային եկամուտները կազմել են 14.7 մլրդ դրամ (Բանկի տոկոսային եկամուտների 66%-ը):

Մանրածախ բիզնեսի գծով շահույթը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ ավելացել է 62%-ով:

Կորպորատիվ բիզնես

2017թ. Յունիբանկը որպես ռազմավարական ուղղություն շարունակել է աշխատանքները փոքր և միջին ձեռնարկությունների համար վարկային միջոցների հասանելիությունը բարձրացնելու ուղղությամբ:
Կորպորատիվ վարկավորման բիզնես մոդելում տեղի են ունեցել էական բարեփոխումներ, որոնց արդյունքում Բանկը կենտրոնացել է միկրո և փոքր բիզնեսի զարգացման, ինչպես

նաև նիշային հաճախորդների համար նոր գործիքակազմի մշակման վրա, ավտոմատացրել է անգրավ միկրովարկերի տրամադրման գործընթացը՝ «Պրոտոբեյզ Լաբորատորիզ» ընկերության նորագույն CRM համակարգի ներդրմամբ:

Բիզնես վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 49%, կամ 69.5 մլրդ դրամ, որի 45%-ը կազմում են ՓՄՁ վարկերը: Բիզնես վարկերի պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը 2017թ. նվազել է 1 տոկոսային կետով և կազմել է 12.3%, տոկոսային եկամուտը կազմել է 5.4 մլրդ դրամ (ընդհանուր տոկոսային եկամուտների 24%-ը):

<u>Ավանդներ</u>

Ժամկետային ավանդների պորտֆելը հաշվետու տարվա վերջում կազմել է 110.5 մլրդ դրամ: Վերջինիս կառուցվածքում գերակշռում են բնակչությունից ներգրավված միջոցները՝ 92.3 մլրդ դրամ կամ պորտֆելի 84%-ը:
Ցպահանջ ավանդները 2017թ. ընթացքում ավելացել են 4.7 մլրդ դրամով և կազմել են 17.9 մլրդ դրամ, որից 7 մլրդ դրամը՝ իրավաբանական անձանցից:
Ընդհանուր պարտավորությունների ֆոնդավորման արժեքը նվազել է 1.4%-ով:

<u>Ներդրողների հետ համագործակցություն</u>

Լրացուցիչ վարկային ռեսուրսների ներգրավման նպատակով 2017թ. Բանկը շարունակել է աշխատանքը առաջատար միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Համագործակցություն է հաստատվել Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության հետ՝ փոքր և միջին ձեռնարկությունների արտահանմանը աջակցելու նպատակով, բանակցությունների արդյունքում նախատեսվում է «Women in business» ծրագրի շրջանակներում կնքել ֆինանսական միջոցների ներգրավման համաձայնագիր հանրահայտ կազմակերպություններից մեկի հետ: Շարունակվել է համագործակցությունը Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC), Առևտրի և զարգացման Սևծովյան բանկի (BSTDB), Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), ՓՄՁ ՀԱԿ հիմնադրամի, ինչպես նաև KfW գերմանական բանկի հետ:

Հաշվի առնելով ներդրողների զգալի հետաքրքրությունը պարտատոմսերի՝ որպես երկարաժամկետ և բարձր եկամուտ ապահովող գործիքի նկատմամբ, 2017թ. Յունիբանկը թողարկեց և հաջողությամբ տեղաբաշխեց դրամային և դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ համապատասխանաբար 10% և 5.75% տարեկան եկամտաբերությամբ, 24 և 36 ամիս ժամկետայնությամբ: Թողարկման ընդհանուր ծավալը կազմել է 250 մլն դրամ և 10 մլն ԱՄՆ դոլար: Պարտատոմսերը ցուցակված են NASDAQ OMX Armenia ֆոնդային բորսայում:

<u>Սպասարկման ցանց, հաճախորդային բազա</u>

2017թ. վերջի դրությամբ Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում էր 46 մասնաճյուղ Հայաստանում և Արցախում, 78 պրոմո կետ, 119 բանկոմատ, 125 վճարային տերմինալ: Մոսկվայում գործում է Բանկի ներկայացուցչությունը, որն օժանդակում է օտարերկրյա հաճախորդների ներգրավմանը:
Տարվա ընթացքում հաճախորդային բազան ընդլայնվել է՝ հասնելով 364,571-ի. կորպորատիվ հաճախորդների քանակը նվազել է 4%-ով՝ կազմելով 3,328, անհատ հաճախորդների քանակն ավելացել է 12%-ով՝ հասնելով 361,333-ի:

<u>Կորպորատիվ կառավարում</u>

Տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքները կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ, կիրառելով միջազգային լավագույն փորձը: Խորհրդի և Վարչության միջև արդյունավետ փոխգործակցությունը թույլ է տվել օպերատիվ լուծում տալ Բանկի գործունեության հետ կապված հարցերին: 2017թ. ընթացքում անց են կացվել հետևյալ նիստերը՝

Խորհրդին կից հանձնաժողովների՝

- Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով՝ 7 նիստ

- Ներդրումային հանձնաժողով՝ 12 նիստ
- Պարգևատրումների հանձնաժողով՝ 4 նիստ

Վարչությանը կից հանձնաժողովների՝

- Ակտիվների և պասիվների կառավարման և սակագնային հանձնաժողով՝ 46 նիստ
- Անձնակազմի գնահատման հանձնաժողով՝ 18 նիստ
- Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության հանձնաժողով՝ 9 նիստ
- Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողով՝ 7 նիստ

Ակտիվ գործում են նաև Պահուստների կառավարման հանձնաժողովը և Վարկային կոմիտեն, տարվա ընթացքում անց են կացվել 41 և 61 նիստ, համապատասխանաբար:

Կադրային քաղաքականություն

2017թ. Բանկի կադրային քաղաքականությունը միտված էր անձնակազմի խրախուսման նպատակով արդյունավետ գործիքների մշակմանը, աշխատակիցների ադապտացման և փորձաշրջանի ավարտից հետո գնահատման գործընթացի կանոնակարգմանը, ինչպես նաև թիմային աշխատանքի զարգացմանը: Տարեվերջի դրությամբ Բանկի աշխատակիցների թվաքանակը կազմել է 783 մարդ:

ԿԲ պահանջներին համապատասխանությունը

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրված խախտումներից միայն երկուսի մասով է Բանկի նկատմամբ սահմանվել տուգանք՝ ընդհանուր 800.000 ՀՀ դրամ գումարի չափով: Մյուս բոլոր խախտումների մասով Բանկի նկատմամբ սահմանվել են խախտումների վերացման ժամկետներ: Սահմանված ժամկետներում Բանկը ձեռնարկել է համապատասխան միջոցառումներ՝ խախտումների վերացման և հետագայում դրանց բացառման նպատակով:

2016թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված Բանկի գործունեության համալիր ստուգման արդյունքում նախապատրաստվել է միջոցառումների մանրամասն ծրագիր՝ ուղղված անհամապատասխանությունների և խախտումների վերացմանը, որի պատշաճ կատարումը գտնվում է Բանկի ղեկավարության մշտական հսկողության տակ:

Հիմնական փաստեր

- ✓ Moody's միջազգային վարկանիշային գործակալությունը բարձրացրել է Յունիբանկի դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների վարկանիշը մինչև B2, փոխելով հեռանկարը որպես «կայուն»: Բազային վարկային գնահատականը սահմանված է b3: Վարկանիշի բարձրացումը պայմանավորված է Բանկի ակտիվների որակի շարունակական բարելավմամբ:
- ✓ Բանկը շարունակել է կատարելագործել ռիսկերի կառավարման համակարգը՝ սահմանելով առաջնային նշանակություն ունեցող շուկայական սեգմենտները և դրանց ներգրավման ռազմավարությունը: Հաճախորդների վարկունակության գնահատման նոր մոդելը թույլ է տվել բարելավել վարկային պորտֆելի որակը և օպտիմալացնել խնդրահարույց պարտավորությունների հավաքագրման գործընթացի ծախսերը:
- ✓ Յունիբանկն առաջին բանկն է Հայաստանում, որը հաջողությամբ անցավ SWIFT վճարային համակարգի անվտանգության պահանջների ատեստավորումը:
- ✓ Յունիբանկը հաջողությամբ անցավ քարտապանների տվյալների անվտանգության ստանդարտների պահանջներին համապատասխանության ամենամյա սերտիֆիկացիոն աուդիտը:
- ✓ CRM-համակարգի բազայի հիման վրա գործարկվել է հաճախորդների դիմումների ուսումնասիրման ժամանակակից համակարգ, որը թույլ է տալիս օպերատիվ և արդյունավետ կերպով արձագանքել հաճախորդների պահանջմունքներին:

Ռազմավարական առաջնահերթություններ

Հաստատված ռազմավարության շրջանակներում Յունիբանկը ձևավորել է 2018թ. առանցքային առաջնահերթությունները՝

- ✓ մանրածախ բանկինգի, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններին մատուցվող ծառայությունների ծավալների մեծացում, բարձր եկամտաբերություն ապահովող սեգմենտների շեշտադրմամբ,
- ✓ բիզնես գործընթացների ավտոմատացում, դրանց արդյունավետության բարձրացում,
- ✓ պարտատոմսերի թողարկման ծրագրի ընդլայնում՝ Բանկի պարտավորությունների կառուցվածքում պարտատոմսերի տեսակարար կշռի մինչև 10% ավելացմամբ, արտասահմանյան շուկայում պարտատոմսերի գնանշում,
- ✓ հաճախորդների՝ Բանկի ծառայություններով բավարարվածության մակարդակի և լոյալության բարձրացում,
- ✓ ֆինանսական արդյունավետության ապահովում և բանկային համակարգում Յունիբանկի դիրքի բարելավում:

Որդեգրած ռազմավարության շրջանակներում Բանկն իր առջև խնդիր է դրել 2020թ. հասնել հետևյալ արդյունքներին՝

- շահույթի ապահովում 4 մլրդ ՀՀ դրամի չափով,
- բանկային համակարգի ակտիվներում մասնաբաժնի ավելացում. մանրածախ վարկավորման գծով՝ շուկայի մինչև 13%-ը, ապառիկ վարկավորման գծով՝ մինչև 40%-ը, կորպորատիվ վարկավորման գծով՝ մինչև 10%-ը,
- պլաստիկ քարտերի քանակի ավելացում տարեկան 80.000-ից մինչև 100.000 հատ:

Եզրափակելով ելույթը, թույլ տվեք, երախտագիտություն հայտնել մեր բաժնետերերին, Խորհրդի անդամներին, գործընկերներին և հաճախորդներին ցուցաբերած աջակցության և վստահության համար: Այսուհետ ևս կգործադրենք բոլոր ջանքերը Ձեր ակնկալիքները առավելագույնս բավարարելու համար:

«Յունիբանկ» ԲԲԸ Վարչության անունից՝

Մեսրոպ Հակոբյան

Վարչության նախագահ

01.06.2018